Հայկական Հատուկ Օլիմպիադաներ

SOA/2025-03-02/01
03 փետրվարի 2025թ

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղար
տիկին Հասմիկ Հակոբյանին

Հարգելի տիկին Հակոբյան,

Ի պատասխան 31.01.2025 թվականի N 04/31.3/2503-2025 գրության Ձեզ ենք ներկայացնում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի ամբողջական փաթեթը և 2026-2028 թվականներին նախատեսվող միջոցառումների օրացուցային պլաններն ու նախահաշիվները:

Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

*«Հատուկ օլիմպիադաները» շահույթ չհետապնդող շարժում է, որը սկզբնավորվել է ԱՄՆ նախագահ Ջոն Քեննեդու քրոջ՝ Յունիս Քեննեդի Շրայվերի կողմից այն հավատով, մտավոր հաշմանդամություն ունեցող անհատների ներգրավումը և ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին դրական ազդեցություն է ունենում նրանց առողջության, ինքնադրսևորման, ինչպես նաև սոցիալական ներառման վրա: «Հատուկ օլիմպիադաները» օգտագործում է սպորտը որպես մտավոր սահմանափակ կարողություններով անձանց սոցիալական ներգրավման միջոց և շուրջ տարի նրանց համար կազմակերպում է սպորտային մարզումներ և մրցումներ տեղական, տարածաշրջանային և աշխարհի մակարդակներում՝ նպաստելով վերջիններիս ինքնավստահության բարձրացմանը, կամային հատկությունների ձևավորմանն ու սոցիալական ինտեգրմանը: 193 երկրները ներկայացնող ավելի քան 5,5 միլիոն հատուկ մարզիկներ մարզվում և մրցում են 32 ամառային և ձմեռային օլիմպիական մարզաձևերով: Հատուկ Օլիմպիադաները և Պարալիմպիկը երկու տարբեր միջազգային շարժումներ են, որոնք ճանաչված են Միջազգային Օլիմպիական Կոմիտեի կողմից:*

**Հայկական Հատուկ Օլիմպիադաներ**

**ՀՀ, Երևան, 0052, Ծարավ Աղբյուրի 55/26, բն. 14 Հեռ. +374 77548073**

**Էլ. փոստ** specialolympicsarmenia@gmail.com **Վեբկայք** www.soarmenia.org